

5244

U40 - Umpm

891.99

U-25

U. A. K. K. K. K. K.

1890

2. 1842 1843 1844 1845 1846 1847 1848 1849 1850 1851 1852 1853 1854 1855 1856 1857 1858 1859 1860 1861 1862 1863 1864 1865 1866 1867 1868 1869 1870 1871 1872 1873 1874 1875 1876 1877 1878 1879 1880 1881 1882 1883 1884 1885 1886 1887 1888 1889 1890 1891 1892 1893 1894 1895 1896 1897 1898 1899 1900 1901 1902 1903 1904 1905 1906 1907 1908 1909 1910 1911 1912 1913 1914 1915 1916 1917 1918 1919 1920 1921 1922 1923 1924 1925 1926 1927 1928 1929 1930 1931 1932 1933 1934 1935 1936 1937 1938 1939 1940 1941 1942 1943 1944 1945 1946 1947 1948 1949 1950 1951 1952 1953 1954 1955 1956 1957 1958 1959 1960 1961 1962 1963 1964 1965 1966 1967 1968 1969 1970 1971 1972 1973 1974 1975 1976 1977 1978 1979 1980 1981 1982 1983 1984 1985 1986 1987 1988 1989 1990 1991 1992 1993 1994 1995 1996 1997 1998 1999 2000 2001 2002 2003 2004 2005 2006 2007 2008 2009 2010 2011 2012 2013 2014 2015 2016 2017 2018 2019 2020 2021 2022 2023 2024 2025 2026 2027 2028 2029 2030 2031 2032 2033 2034 2035 2036 2037 2038 2039 2040 2041 2042 2043 2044 2045 2046 2047 2048 2049 2050 2051 2052 2053 2054 2055 2056 2057 2058 2059 2060 2061 2062 2063 2064 2065 2066 2067 2068 2069 2070 2071 2072 2073 2074 2075 2076 2077 2078 2079 2080 2081 2082 2083 2084 2085 2086 2087 2088 2089 2090 2091 2092 2093 2094 2095 2096 2097 2098 2099 2100 2101 2102 2103 2104 2105 2106 2107 2108 2109 2110 2111 2112 2113 2114 2115 2116 2117 2118 2119 2120 2121 2122 2123 2124 2125 2126 2127 2128 2129 2130 2131 2132 2133 2134 2135 2136 2137 2138 2139 2140 2141 2142 2143 2144 2145 2146 2147 2148 2149 2150 2151 2152 2153 2154 2155 2156 2157 2158 2159 2160 2161 2162 2163 2164 2165 2166 2167 2168 2169 2170 2171 2172 2173 2174 2175 2176 2177 2178 2179 2180 2181 2182 2183 2184 2185 2186 2187 2188 2189 2190 2191 2192 2193 2194 2195 2196 2197 2198 2199 2200 2201 2202 2203 2204 2205 2206 2207 2208 2209 2210 2211 2212 2213 2214 2215 2216 2217 2218 2219 2220 2221 2222 2223 2224 2225 2226 2227 2228 2229 2230 2231 2232 2233 2234 2235 2236 2237 2238 2239 2240 2241 2242 2243 2244 2245 2246 2247 2248 2249 2250 2251 2252 2253 2254 2255 2256 2257 2258 2259 2260 2261 2262 2263 2264 2265 2266 2267 2268 2269 2270 2271 2272 2273 2274 2275 2276 2277 2278 2279 2280 2281 2282 2283 2284 2285 2286 2287 2288 2289 2290 2291 2292 2293 2294 2295 2296 2297 2298 2299 2300 2301 2302 2303 2304 2305 2306 2307 2308 2309 2310 2311 2312 2313 2314 2315 2316 2317 2318 2319 2320 2321 2322 2323 2324 2325 2326 2327 2328 2329 2330 2331 2332 2333 2334 2335 2336 2337 2338 2339 2340 2341 2342 2343 2344 2345 2346 2347 2348 2349 2350 2351 2352 2353 2354 2355 2356 2357 2358 2359 2360 2361 2362 2363 2364 2365 2366 2367 2368 2369 2370 2371 2372 2373 2374 2375 2376 2377 2378 2379 2380 2381 2382 2383 2384 2385 2386 2387 2388 2389 2390 2391 2392 2393 2394 2395 2396 2397 2398 2399 2400 2401 2402 2403 2404 2405 2406 2407 2408 2409 2410 2411 2412 2413 2414 2415 2416 2417 2418 2419 2420 2421 2422 2423 2424 2425 2426 2427 2428 2429 2430 2431 2432 2433 2434 2435 2436 2437 2438 2439 2440 2441 2442 2443 2444 2445 2446 2447 2448 2449 2450 2451 2452 2453 2454 2455 2456 2457 2458 2459 2460 2461 2462 2463 2464 2465 2466 2467 2468 2469 2470 2471 2472 2473 2474 2475 2476 2477 2478 2479 2480 2481 2482 2483 2484 2485 2486 2487 2488 2489 2490 2491 2492 2493 2494 2495 2496 2497 2498 2499 2500 2501 2502 2503 2504 2505 2506 2507 2508 2509 2510 2511 2512 2513 2514 2515 2516 2517 2518 2519 2520 2521 2522 2523 2524 2525 2526 2527 2528 2529 2530 2531 2532 2533 2534 2535 2536 2537 2538 2539 2540 2541 2542 2543 2544 2545 2546 2547 2548 2549 2550 2551 2552 2553 2554 2555 2556 2557 2558 2559 2560 2561 2562 2563 2564 2565 2566 2567 2568 2569 2570 2571 2572 2573 2574 2575 2576 2577 2578 2579 2580 2581 2582 2583 2584 2585 2586 2587 2588 2589 2590 2591 2592 2593 2594 2595 2596 2597 2598 2599 2600 2601 2602 2603 2604 2605 2606 2607 2608 2609 2610 2611 2612 2613 2614 2615 2616 2617 2618 2619 2620 2621 2622 2623 2624 2625 2626 2627 2628 2629 2630 2631 2632 2633 2634 2635 2636 2637 2638 2639 2640 2641 2642 2643 2644 2645 2646 2647 2648 2649 2650 2651 2652 2653 2654 2655 2656 2657 2658 2659 2

891.99

4-25

Ա.Զ.Օ-ՄԱՐՈՒՆ

12002

800
32-49

2011

Ս. ՊԵՏԵՐՔՈՒՐԳ.
ՏՊԵՐԱՆ Ի. Ն. ՍԿՐՈՒԹՅՈՒՆ
1890.

891.99
 4-25
 800
 52-ԱԶ
 ևս.

ԱԶՕ-ՄԱՐՈՒՆ

1001
 87
 9



Ս. ՊԵՏԵՐՔՈՒՐԳ
 ՏՊԱՐԱՆ Ի. Ն. ՍԿՐԻՊՏՈՐԻՍՏ
 1890.

1588
008
211-20

Дозволено цензурою. С.-Петербургъ, 10 сентября 1890 года.

Типографія И. Н. Скороходова (Надеждинская, № 43).

ԱԶՕՄԱՐՈՒՆ.

Վանայ ծովի մօտաւորապէս Հարաւ-ա-
րեւելեան կողմը գտնուում է մի աշխարհ Զու-
լամերկ անունով: Այս աշխարհը կազմուած է
խոր, անանցանելի անտառներով ծածկուած
բլուրներից, լեռի, սեպացած քարաժայռերից,
ամառ-ձմեռ ձիւնով ծածկուած երկնքին մօ-
տիկ սարերից: Յանկարծակի անդունդները,
խոր-խոր կիրճերն ու ձորերը, որոնց մէջ
դճգում են ջրվէժներն ու առուները, կարը-
տում են այդ մշուշով պատած բարձրութիւն-
ները: Այս վայրենի ու գեղեցիկ աշխարհում
բնակւում են մի խումբ քաջ ու ազատ մար-
դիկ՝ ասորի-նեստորականները: Բարբարոս թուր-
քերը, որոնց հրոսակները ահագին թաղաւո-
րութիւններ էին տապալում, չըկարողացան վերջ-

*

նականապէս զսպել այս անկախ լեռնաբնակ առիւծներին, որոնք իրանց մօր կաթի հետ ընդունում են աղատութիւնի ու քաջութիւնի զազափարը:—Այն ի՞նչ Գուլամերկցի է, որ գոնէ մի թուրք չըլինի սպանած. նա էլ ի՞նչ մարդ է... Տե՛ս, դուրս է եկել մի պառաւ այրի նաշխուն շորերով զուգուած. նրա աղջիկը զարգարել է գլուխն ու կուրծքը լեռնային ծաղիկներով,—ինչո՞ւ, հարցրու նրանց և նրանք կրպատասխանեն քեզ, որ նրանց աչքի լուսը՝ աղջկայ եղբայրը մի խուլ կիրճում երկու թուրք է սպանել ու մարմինները գաղաններին կերակուր տուել...

Գուլամերկի ջէյրանի նման թեթեալ քայլ գիշեր նման սեպեայ աղջիկը ետ չի մնալ քաջութիւնով իր եղբօրից կամ հօրից. ձեռքին ձօճում է նա երկար նիզակը, գօտկում խրած ունի կեռ եսթաղանը ու վայ էն լերք թուրքին, որ ծուռ աչքով կրնայի նրա վրա. անսասան հարուածը մի ակնթարթում վերջ կըղնէ վաժաշտ թուրքի կեանքին,—Գուլամերկի աղջիկը գիտէ պաշտպանել իր պա-

տիւր: Ի՞նչ քուրդ կըհամարձակուի ֆեսա տալ Գուլամերկցի մի ասորուն, գիտե՞, որ մի սպանուած ասորու տեղ մի ամբողջ քրդի գիւղ կրակի ու սրի կըզնայ: Վալիից ղեկած հարկ ժողովոյն անգամ չի յանդգնիլ Գուլամերկ մտնել: Վու ի՞նչ գործ ունես մեր սարերում, կասեն նրան, այս աշխարհը մեզ են թողել մեր պապերը, ուստի դու, որ մեր հաւատից չես, այլ թուրք ես, այստեղ գործ չունես. հարկ ես պահանջում, զնա՛, աւելորդ փող ունենանք, մենք ինքներս կըղրկենք վալին, իսկ դու այստեղ գործ չունես,—սա մեր աշխարհն է: Եւ թող համարձակուի հարկ ժողովոյն ընդգիմանալ. նրա իզն ու թողը կըկորչի խուլ ու մթին կիրճերում...

Չորի մի կողմից բարձրանում է ուղղահայեաց մի բարձր ժայռ, որը ծածկուած է համարեա միշտ մշուշով. եթէ մշուշը ցրուի, դու կըտես նես ժայռի գլխին մի սև բան՝ կարծես արծիւի բուն լինի. դա Գուլամերկցի Անի-ձասան մէլքի ամրոցն է: Վաղուց մեռել է Ա-

նի-Հասանի կիներ, նա չունի տղայ, նրա միակ ժառանգն է նրա Աղօ-Մարուն աղջկը, որ չընայելով իր տասնութամայ Հասակին՝ դեռ ոչ մի փեսացու չէ ընտրել, ոչոքի չէ Հաւանել, շատերն են ուզում նրան, բայց ամէնքն էլ կտրւում են, երբ Աղօ-Մարունը քննում է նրանց:

Տեսնենք՝ թէ Աղօ-Մարունը ինչպէս է քննում իր փեսացուներին, գալիս է մէկը.

— Սկի թուրք սպանե՞լ ես, Հարցնում է նրան Աղօ-Մարունը:

— Սպանել եմ, պատասխանում է նա:

— Վանի՞ Հատ:

— Երկուսը:

— Երկուսը քիչ է, դնա՛, դեռ էլի սպանիր:

Գալիս է մի այլ փեսացու:

— Վանի՞ վէրք ունեւ:

— Շատ:

— Համբի՛ր:

— Մէկը ուսիս, մէկը փորիս, մէկը, ուսիս, էլի ոտիս...

— Լաւ, լաւ, Հապա էն ի՞նչպէս էր, որ բուրդ Ալի-Ռաբան ձեռքիցդ փախաւ:

— Ձէր փախչիլ շան ուրդին, բայց նիզակս նրա վահանի վրէն կոտրուեց ու մինչեւ խանչալս կըՀանէի՝ նա ծլկուեց:

— Մաշալւահ, Հրհուումէ Աղօ-Մարունը, շատ ճարպիկ ես եղել ու նիզակդ էլ լաւ փայտից... ու թողնում է խեղճին մենակ:

Գալիս է երրորդը: Սա արդէն յայտնի է իր քաջութիւնով ու ճարպիկութիւնով, սպանել է շատ թուրքեր, մինչեւ անգամ զափթիներ:

— Գու լսե՞լ ես, Հարցնում է նրան Աղօ-Մարունը, որ վալին զօրք է զըլում, որ մեր աշխարհը մեզնից խէ ու մեզ էլ ստրկացնէ:

— Լսել եմ, Հապա:

— Ու դու չե՞ս ամաչում այսպիսի ժամանակ աղջկանց ետեւից ընկնել...

Եւ իրաւ՝ ձանձրացրեց փաղիշահին այս մի բուռն ժողովուրդի անվերջ յուզմունք-

ներն ու նա հրամայեց իր արիւն խմող փաշաներից մէկին՝ վերացնել անկախութիւնը Զուլամերկի սարերից ու ստրկացնել ազատ անուաճ ժողովուրդը։ Արտաացին թնդանօթները Զեքեարիի լեռներում ու հազարաւոր ասորիք ու հայեր կոտորուեցին թուրքերի ձեռքից։ մատաղ օրիորդներով լցուեցին նրանց հարէմները, իսկ կանայք ու մանուկներ տալուեցին հեռու-հեռու աշխարհներ ու յաւիտենական ստրկութիւնի մատնուեցին։ Բայց՝ երբ այդ բարբարոս հրոսակները մօտեցան Զուլամերկի սարերին՝ յանկարծակի կանգ արան,— զարթել էին Զուլամերկի առիւծներն ու դարան էին մօտել խուլ կիրճերում։ հեշտ չէր այնտեղ մօտեր։

Եւ իրաւ՝ յուզուել, ոտքի էր կանգնել Զուլամերկը, սուր ու դաշոյն սրւում էին, հրացան, ատրճանակ նորոգւում, վառօդ, գնդակ պատրաստւում։ վեր էին կացել թէ մարդիկ թէ կանայք պաշտպանելու իրանց հայրենական բունը։ Զրաման դուրս եկաւ Մար-Շի-

մօնից բոլոր մէլքներին*) կապել շւտով կիրճերն ու չրթողնել թուրքերին։

Շարժումի մէջ է և Անի-Հասանի ամրոցը, նրան ենթարկուող նայիրներն իրանց բոլոր մարդկանցով հաւաքուեցին ամրոցում։ Անի-Հասանը հրամայեց զէնք առնել բոլորին՝ թէ մարդկանց, թէ կանանց, ապա նա իր զօրքը երկու մասի բաժանեց, մէկը—աղջկանց գունդն Աղօ-Մարունի առաջնորդութիւնով պիտի մնար ամրոցում՝ հսկելու նրա շրջակայքի վրա, իսկ միւսը—տղամարդկանց գունդն արագ-արագ դուրս եկաւ ամրոցից ու արշաւեց թուրքերի վրա։

Ծերուկ մէլքը կարծես երիտասարդացել էր, նա դուրս եկաւ մինչև անգամ Զուլամերկի

*) Մար-Շի իմօնը Զուլամերկի հոգեւոր ու մարմնաւոր գլուխն է. նրան ենթարկւում են մէլքները, որոնք սովորաբար իրանց ձեռքի տակ ունեն 8—10 գիւղեր, իսկ մէլքներին ենթարկւում են նայիրները—գիւղապետները

սահմաններից ու կրակ տուեց մի քանի քրդի գիւղեր, որտեղ թուրքի զօրքերը հանդիստ ու պաշար պիտի առնէին: Նա միշտ քաշուում էր արձակ դաշտում կռիւ տալու թուրքերի կանոնաւոր զօրքերին, այլ ծածուկ՝ մէկէլ տենետ՝ երևում էր մի բլրի գլխին կամ խիտ անտառում դարան մտած, յարձակուում էր յանկարծակի թուրքերի վրա, շփոթում նրանց շարքերն ու կրկին ետ էր քաշուում: շատ անգամ մութ գիշերով անհետանում էին թուրքերի ձիաները՝ կամ պաշարը, կամ սայլերը հրդեհւում... մէկ խօսքով՝ շատ էր նրա տուած փեսքը թուրքերին, բայց նրանց բազմութիւնի առաջն առնել չըկարողացաւ: Թուրքերն առաջանում էին հետզհետէ, վերջապէս հասան նրանք մի կիրճի, որտեղից հեռւեալ առաւօտ պիտի մանէին Գուլամերի...

Եւր նրանք շարժուեցին կիրճի միջով՝ լսեցին մի ահեղ գոռոց, — դա Անի-Հասանի ձայնն էր: Արկիւքից կրակ թափուի էն Զուլամերիցու գլխին, որ ինքը գեռ եւ կենդանի՝ թողնի թուրքին մանելու մեր աշխարհը, թող

նրանք անցնեն մեր միայն դիակների վրայով.....»
և սկսաւ ճակատամարտը
.

Ընկան այնտեղ ամէնքը: մէկը չըմնաց մինչև անգամ կենդանի, որ խաբար տանէր Աղօ-Մարունին թէ՝ «հայրդ մեռաւ պատերազմում»...

Անցան թուրքերը քաջերի դիակների վրայով, մտան Գուլամերի և արշաւանքը դէպի ամրոցն ուղղեցին, բայց ճանապարհին ոչ մի կենդանի մարդ չըտեսան. տղամարդիկ ննջում էին մահառիթ կիրճում յաւիտենական քնով, իսկ կանայք այրել քանդել էին իրանց տներն ու դիւղերն ու ապաւինել ամրոցում:

Մօտեցան թուրքերն ամրոցին ու տեսան պարիսպների վրա կին-պահապաններ. նրանք հասկացան, որ այսուհետեւ դործ պիտի ունենան կանանց հետ, դրա համար մտքներումը ծիծաղեցին, բայց՝ երբ բաւական մօտեցան ամրոցին՝ մի այնպիսի հրացանաձգութիւն եղաւ այնտեղից, որ թուրքերի առաջին շարքերը դետին տապալուեցին: Ուշքի եկան թուրքերն ու

նորից առաջացան, բայց կրկին խիստ հրացանաձողութիւնը ետ վանեց նրանց: Այն ժամանակ հրամայեց փաշան դադարեցնել յարձակումն ու՛ պաշարել ամրոցը: Նա առաջուց զրաւեց մի քանի բարձրութիւններ հետեւեալ օրուայ յարձակումի համար:

Այս գիշերից անց՝ սաստիկ աղմուկ ու շփոթ ընկաւ թուրքերի բանակում: Փաշան հարցրեց պատճառը. նրան պատասխանեցին՝ թէ մէլքի աղջիկը յարձակուել է թուրքերի վրա ու արդէն ետ խլել նրանց զրաւած բարձրութիւնները...

Հետեւեալ օրը պաշարումը սաստկացաւ: Թնդանօթներն որոտում էին հեռուից ու բերդի պատերը քանդում, իսկ բերդից երբեմնապէս դուրս էր դալիս մի գունդ Ազո-Մարունի առաջնորդութիւնով, շեշտակի հարուածում թուրքերի առաջացող գնդերին ու ցած գլորում ժայռերից... և երկար երևում էր այդ ժայռից ժայռ ոստոստող գունդը, ինչպէս լեռնային ջէլլանների մի երամակ...

Մի քանիսը նրանցից մեռան կռում, մի-

քանիսն էլ վերաւոր՝ ընկան թուրքերի ձեռք, ու փաշան ցանկացաւ տեսնել այդ «հուրի-ազրայիւներին», բայց՝ թուրքերը մինչև անգամ վերաւորների հետ կռուել դժուարացան. Չուլամերկի վերաւոր աղջիկները փոխանակ մահուան հետ կռուելու՝ կռում էին իրանց գերիւնների հետ, չանգոում էին նրանց երեսները ու կծոտում նրանց ձեռքերը...

Գիշերը նոյն աղմուկն ընկաւ թուրքերի բանակում: Ազո-Մարունը կրկին յարձակուեց թուրքերի վրա ու ետ խլեց նրանց ցերեկով զրաւած մի քանի տեղերը: Աւերջապէս փաշան հրամայեց շարունակել բերդի քանդելը Թնդանօթներով, իսկ Չուլամերկի աղջիկներին՝ մանաւանդ Ազո-Մարունին՝ որսալ քեամանդներով (օղէպարան):

Հետեւեալ օրը ժայռերի վրա կրկին երևացին «հուրի-ազրայիւներն» ու հարուածեցին թուրքերին, որոնք՝ փոխանակ զէնքով պատասխանելու՝ զցեցին նրանց վրա քեամանդներ: Արկու անգամ Ազո-Մարունը կտրեց կաթաղանով պարանը, իսկ երրորդ անգամ չըկարողա-

ցաւ ու չողեց գեանին. մի քանի ուժեղ ձեռքեր խսկոյն նրան զինաթափ արեցին, կապկըպեցին ու տարան փաշայի բնակարանը:

Ամրոցը պաշարուած էր երեք կողմից, միայն մի կողմից էր բաց, որտեղից սկսեում էր ահազին անդունդը: Պատերի մեծ մասը քանդուած էր, բերդի հրամանատարը՝ քաջ Աղօ-Մարունը գերի ընկած, որով սաստիկ թուլացիլ էր պաշարուողների ուժը: Թուրքերը խուռն կերպով յարձակուեցին, ծուլամերկի աղջիկները սաստիկ ընդգիմով թիւն ցոյց տուին, շատերը նրանցից ընկան բերդի պարիսպների մօտ, բայց մնացածները չըզիմացան ու, երբ տեսան որ թուրքերն արդէն ամրոց են մտնում, չուզեցան լուրջ նրանց ձեռքը կենդանի ընկնել՝ ահազին ճիշդ արձակեցին, առան իրանց մանուկները, զարկեցին նրանց քարերին ու ժայռերին և իրանց ձեռքով սպանեցին, ապա վաղ տուին դէպի անդունդն ու նզովք կարգալով թուրքերի ու նրանց որդկերանց զլխին՝ ցած ընկան այնտեղից.... նրանց մարմինները կտոր կտոր արին

սէպ-սէպ ժայռերն ու գիշատիչ անգղն ու բազէն յօշոտեցին այդ կտորները....

Հին ժամանակ թուրքի փաշաները սովորութիւն ունէին պատերազմի ժամանակ տանել իրանց հետ հարէմի դռնէ մի մասը գիշերները զուարճութիւնով անցկացնելու, մանաւանդ՝ զեղեցկուհի գերիներին բռնաբարելու համար: Ահա այսպիսի հարէմն էր ընկել և քաջ Աղօ-Մարունը:

Խաղաղ գիշեր է, խաղաղ է և թուրքերի բանակում: արիւնով ներկուած լուսինը տխուր նայում է Անի-Հասանի ամրոցի աւերակներին. ձիւնով ծածկած սարերն անգամ լուսնի ճառանչների տակ փայլում են արիւնի գունով. փչում է թեթեւ քամին ու բերում հեռուից վիրաւորների երբեմնապէս-ընդհատուող անքոցի ու հառաչանքի ձայները. ամէն կողմից բուրում է թարմ դիակների ու արիւնի հոտ, և՛ այս մահուան բնում անկած է մի շքեղ վրան, որտեղ զազան փաշան բաւականութիւն

է աալիս իր անասնական հաճոյքներին. դա փա-
շայի բնական ան ու հարէմն է:

Հարէմի մի շքեղ սենեակում ընկած է Աղօ-
Մարունը կապկպած. մտնում է յանկարծ փա-
շան ներքինիների հետ ու մի զննող հայեացք
դրում նրա վրա, ապա ժպտում՝ երեւի հա-
ւանելով նրան ու հրամայում ետ անել կա-
պանքները: Աղօ-Մարունը մուայլ դէմքով կանգ-
նած է փաշայի առաջ: Փաշան տենչանքով
լցուած՝ ձեռք քսեց նրա երկար ու խիտ մա-
զերին, բայց Աղօ-Մարունն այնպիսի մի վազ-
րի հայեացք դրեց փաշայի վրա, որ ահեղ
բռնակալը ետ ու ետ դնաց, այնժամանակ
փաշան նշան արաւ ու ներքինիները մօտեցան
Աղօ-Մարունին

Անպատուած Աղօ-Մարունը պառկած է փա-
փուկ մահճի վրա. կորցրել է նա իր առնական
բաջութիւնն ու թուլացած՝ կնոջ նման լաց
է լինում ու բարձր ձայնով հեկեկում, իսկ
կողքին պառկած փաշան ծիծաղում է նրա լա-

յի վրա ու բաւականութեամբ բեխերն ուղ-
րում. «այ լեռնային վաղր, անուրէն նա, տեսնո՞ւ
ոնց քեզ դառը շինեցի». իսկ Աղօ-Մարունը
գունատուած, ուժից ընկած՝ թափում է աղի
արտասուք ու դողում՝ կարծես տենդի մէջ:
Մանկութիւնից սկսած նա այսպէս լաց չի
եղել, իսկ հիմա նա լաց է լինում, որ նրան՝
թշուառ, անպաշտպան որբին՝ անարգեցին, ան-
պատեցին անօրէն ու անգութ մարդիկ...»

Իսկ փաշան բաւականացած՝ անուշ քնով
խռմփում է ու մինչև անգամ քնի մէջ ժպտում
է նրա էն մուրտառ երեսը...

Փոքր ինչ ուշքի եկաւ Աղօ-Մարունն ու
երբ աչքը դրեց կողքին պառկած փաշայի
ժպտացող դէմքին՝ մի յուպով ցամաքեց նրա
աչքերում արտասուքը. նրա մէջ բռնուն ու-
ժով վառուեց վրէժխնդրութիւնը, վրան ե-
կաւ մի գերբնական ուժ, մոնչեց վաղրի նման
ու առամները խրեց փաշայի կոկորդի մէջ:
Յնցուեց փաշան, խրխուաց ու բանհոգի եղաւ:—
Աղօ-Մարունը դուրս ել կռծել նրա կոկորդը:
Չարթեցան այս խուլ կռուի վրա ներքի-

ներերը, ներս մտան ու տեղները սառած մնացին: Արիւնի մէջ լողում էր՝ նրանց փաշան, իսկ Ազօ-Մարունը կողքին կանգնած՝ բաւականութիւնով նայում էր, թէ ինչպէս փաշայի կոկորդից դուրս էր ցայտում աղբիւրի պէս արիւնը: Յարձակուեցին նրանք Ազօ-Մարունի վրա, նորեց կապկպեցին ու տարան, յանձնեցին մօլլաների դատաստանին:

Այս գիշերին բանակի մէջ մօլլաների դատաստան եղաւ, որ վճռեց էգոց և եթ մասմաս անել հերոսուհի Ազօ-Մարունին.... Բայց—ինչպէս եղաւ յայտնի չէ—միայն նոյն գիշերը մի ձիաւոր արագ-արագ սլացաւ թուրքերի բանակից, գնաց Սաջանօսի կիրճն ու յայտնեց Մար-Շիմօնին, որ Ազօ-Մարունը սպանել է փաշային: Ուրախացաւ Մար-Շիմօնն ու հրամայեց իր զօրքերին իսկոյն և եթ կէս գիշերով ճանապարհ ընկնել՝ հարուածեւոր թուրքերի վհատուած զօրքերը....

Առաւօտ է. բանակի մէջ տեղում դրուած է մի բարձր կառանփնարան Ազօ-Մարունի

համար. վաղուց նրա վրա երկու դահիճ սրում են կացինն ու դանակները. թուրքերը շրջապատել են կառանփնարանն ու անհամբեր սպասում են զուարճանալու՝ տեսնելով ճշուլամերկի հերոսուհու մահը:

Վերջապէս երևեցաւ նա՝ հրաշայի Ազօ-Մարունը կապկպած, դափթինելով շրջապատուած. նա քայլում էր համարձակ, գոռոզ աչքերով նայում թուրքերին: Նրան բարձրացրին կառանփնարանի վրա. մօտեցաւ մի մօլլա ու խորհուրդ տուեց նրան՝ մահից առաջ ընդունել մահմէդականութիւնը՝ եթէ նա ուզում է ջէննաթը գնալ: «Գնա՛, ասաց նրան Ազօ-Մարունը, եթէ չես ուզում Գուրանիդ ու Մարդարէիդ անպատուութիւնը», մօլլան վախվռտելով իջաւ կառանփնարանից: Գահճապետը մօտեցաւ Ազօ-Մարունին ու ասաց, որ թող իր լիզուով աղօթէ:

Ու Ազօ-Մարունն աչքերն երկնք դցեց, որի վրայով լողում էին զգզուած քօղի պէս ոսկեղօծ ամպերը. բլրից ծագել էր կարմիր արեգակը. հեռու սարերում մուգ-կապուտ դու-

նով ներկում էին անտառները, իսկ նրանցից, էլ հեռու՝ սրածայր գլխներն երկինք հասցրած վարդի գունով վառւում էին ձիւնով ծածկած սարերը, ամպերը մինչև անգամ ցած էին մնացել այդ սարերի գլխներից ու ոլոր-մոլոր էին դալիս նրանց լանջերով։ Կապուտակ մշուշը լըցրել էր կիրճերն ու ձորերը, իսկ հեռու մի ինչ որ տեղ ծլւում էր արտուտիկը։ Հրաշալի էր բնութիւնն ու Ազո-Մարունը ցանկացաւ ապրել, բայց... Կողքին՝ դահլիճը սրում էր դանակը։—

Մի բարձր ժայռի գլխին կարծես ծեփած էր Անի-Հասանի աւերակ ամրոցը. այնտեղ էր նա անցկացրել իր մանկութիւնը, այնտեղ էր նրան գուրգուրել իր մայրը. այս ամէնը յիշեց Ազո-Մարունն ու նրա սիրտը փղձկացաւ... Բայց այն ի՞նչ է. հեռու, հեռու ժայռի մի կողմից երևում է մի ինչոր գիծ, որը հեռզհեռ է մեծանում է։ Ի՞նչ է այն։—Արդեօք աչքով տեսաւ Ազո-Մարունը, թէ սրտով իմացաւ, միայն նա հաստատ գիտէր, որ դալիս են արագ-արագ ձիււորներ, որ ճօճում են երկայն-երկայն նի-

զակները, իմացաւ՝ որ այն իր հայրենիքի ղրինուրներն են, որ նրանց առաջնորդում է Զուլա-մերկի իշխողը՝ Մար-Շ խմօնը սպիտակ ձի հեծած...։

Ու հրճուեցաւ Ազո-Մարունը, ժպտացին նրա հրեշտակային աչքերն ու ճակատը փայլեց յուսոյ նշուլով...։

— Աղօթի՛ր, գոռաց դահճապետը։

Նա չողեց կառափնարանի վրա, ձեռքերն երկինք տարածեց ու կանչեց. «Աստուած, օգնի՛ր իմ հայրենիքին, Աստուած, փրկի՛ր Զուլա մերկը»...։

Դահլիճը բռնեց նրա ծամերից ու կտրեց զուլսը...։ Նրա մարմինը մաս-մաս արեցին ու տուին բանակի շներին կերակուր...։ Բայց յանկարծակի լսուեցան ձիաների տրոփիւններ, ահռելի աղաղակներ, հրացանների ճայթիւններ ու Մար-Շ խմօնը երեք կողմից միասին հարուածեց թուրքերի վհատուած ու շփոթուած զօրքերը.

Աղաա էր կրկին Տաւաճակը, իսկ նրա
ազատարար Ազո-Մարունը չը տեսաւ այլ ևս
այդ ազատութիւնը....

Վ Ե Ր Չ



5244

2013

ԳՐԱՆԵՐԵՔ ԿՕՊԵԿԻ Է:

